ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Քաղաքացիական գործ **թիվ *ԵԴ2/8715/02/25***

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎՐԻՊԱԿՆՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահությամբ դատավոր ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆԻ

2025 թվականի սեպտեմբերի 9-ին քաղաք Երևան

քննարկելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/8715/02/25 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին որոշման մեջ թույլ տրված վրիպակն ուղղելու մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ԷՄՀԱՐ ՍՊ ընկերության ներկայացուցիչը հայցադիմումէ ներկայացրել դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարությանթիվ՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-9/2» ծածկագրով գնման ընթացակարգի բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի2025 թվականի հուլիսի 25-ի թիվ 1 որոշմամբ հրապարակված Հրավերի 4-րդ չափաբաժնի գնմանառարկայի տեխնիկական բնութագրում նշված հետևյալ պահանջը՝ «Ձեռքբերման ենթակա ապրանքըպետք է լինի Guarisco արտադրող ընկերության Phoenix BLU18 մոդելի և/կամ համարժեք համարվողW&H արտադրող ընկերության Lyla 22 մոդելի և/կամ Techno-Gaz industries արտադրողընկերության Europa B EVO և/կամ Euronda արտադրող ընկերության E10 մոդելի սարքերիցորևիցե մեկը։», անվավեր ճանաչելու պահանջի մասին։

ՀՀ քաղաքացիական դատավարությանօրենսգրքի 197-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ակտում թույլ տրված վրիպակները,գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին միջնորդությունը կարող էներկայացվել, իսկ դատարանն իր նախաձեռնությամբ այդ գործողությունները կատարում էդատական ակտի կայացման պահից մինչև դրա կատարումը, իսկ 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի դատական ակտում տեղգտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու հարցը դատարանըլուծում է առանց դատական նիստ հրավիրելու: Դատական ակտում տեղ գտած վրիպակները,գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու մասին միջնորդությունն առաջին ատյանիդատարանը պետք է քննի և լուծի այն ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում, իսկ 3-րդմասի համաձայն՝ դատական ակտում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանականսխալներն ուղղելու մասին առաջին ատյանի դատարանը կայացնում է որոշում, իսկ 4-րդմասի համաձայն՝ դատական ակտում տեղ գտածվրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու կամ դրանց վերաբերյալմիջնորդությունը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքովսահմանված կարգով, իսկ 5-րդ մասի համաձայն՝ դատական ակտը բեկանելու դեպքում իրենցուժը կորցնում են դրանում տեղ գտած վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներնուղղելու մասին որոշումները, եթե այլ բան սահմանված չէ վերադաս դատական ատյանիորոշմամբ:

Սույն քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթընդունելու և ապացույց պահանջելու մասին որոշման մեջ պատասխանողի անունը «ՀՀ պաշտպանության նախարարություն»-ի փոխարեն նշվել է «Երևանի քաղաքապետարան», հետևաբար Դատարանը գտնում է, որ պետք է ուղղել հայցադիմումըվարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասին որոշման մեջ թույլ տրված տեխնիկական վրիպակը, այն է՝ պատասխանողիանունը «Երևանիքաղաքապետարան»-ի փոխարեն պետք է կարդալ «ՀՀ պաշտպանության նախարարություն»:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 197-րդ, 199-րդ,200-րդ և 361-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/8715/02/25քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու մասինորոշման մեջ ուղղելթույլ տրված վրիպակը, այն է պատասխանողի անունը «Երևանի քաղաքապետարան»-ի փոխարեն կարդալ «ՀՀ պաշտպանության նախարարություն»:

2. Վրիպակն ուղղելու մասին դատարանի որոշումը կարող է բողոքարկվելՎերաքննիչ քաղաքացիական դատարան՝ այն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872
Date: 2025.09.09 18:55:27 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am